Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թվականի
օգոստոսի 2-ի N 968 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԹՈՐԱԾ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ «ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ» (ԱՏԳ ԱԱ) ԴԱՍԱԿԱՐԳՉԻ 220870 ԾԱԾԿԱԳՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԼԻԿՅՈՐՆԵՐԻ ԵՎ 220890 ԾԱԾԿԱԳՐԻՆ ԴԱՍՎՈՂ՝ ՄԻՆՉԵՎ 9 ՏՈԿՈՍ ՍՊԻՐՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՅԼ ՍՊԻՐՏԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ), ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ 2208 ԾԱԾԿԱԳՐԻՆ ԴԱՍՎՈՂ՝ ՄԻԱՅՆ ՊՏՈՒՂՆԵՐԻՑ ԵՎ ՀԱՏԱՊՏՈՒՂՆԵՐԻՑ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԽԱՂՈՂԻ) ԹՈՐՎԱԾ 40 ՏՈԿՈՍ ԵՎ ԱՎԵԼԻ ՍՊԻՐՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ) ԵՎ ԽՄՈՐՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ ԷԹԻԼԱՅԻՆ ՍՊԻՐՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են թորած ալկոհոլային խմիչքների (բացառությամբ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների), ինչպես նաև 2208 ծածկագրին դասվող՝ միայն պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների) և խմորման նյութերից էթիլային սպիրտի (այսուհետ՝ թորած ալկոհոլային խմիչքների և խմորման նյութերից էթիլային սպիրտի) արտադրության լիցենզավորման գործընթացի հետ կապված հարաբերությունները:

2. Թորած ալկոհոլային խմիչքների և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրությամբ կարող են զբաղվել իրավաբանական անձինք, ինչպես նաև անհատ ձեռնարկատերերը (այսուհետ՝ հայտատու):

3. Թորած ալկոհոլային խմիչքների և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրության համար լիցենզիան (այսուհետ՝ լիցենզիա) տրվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից (այսուհետ՝ լիցենզավորող մարմին)՝ բարդ ընթացակարգով, անժամկետ:

4. Բարդ լիցենզիան տրվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) և սույն կարգով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացվելուց հետո 30 օրվա ընթացքում:

5. Լիցենզիա տալու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:

II. ԹՈՐԱԾ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԽՄՈՐՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ ԷԹԻԼԱՅԻՆ ՍՊԻՐՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Թորած ալկոհոլային խմիչքների և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրությունը պետք է ապահովված լինի լաբորատորիայով՝ արտադրանքի քիմիական և տեխնոլոգիական հսկման նպատակով:

III. ԹՈՐԱԾ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԽՄՈՐՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ ԷԹԻԼԱՅԻՆ ՍՊԻՐՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

7. Թորած ալկոհոլային խմիչքների և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրության լիցենզավորման համար հայտատուն ներկայացնում է՝

1) հայտ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 2-ի N 968 -Ն որոշման N 2 հավելվածի ձևի, նշելով՝

ա. իրավաբանական անձը՝ կազմակերպության անվանումը, կազմակերպական–իրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահա-

մարը, պետական գրանցման համարը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել,

բ. անհատ ձեռնարկատերը՝ անունը, հայրանունը, ազգանունը, բնակության և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը, պետական հաշվառման համարը, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել.

2) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը, իսկ էլեկտրոնային համակարգով վճարելու դեպքում՝ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի կողմից գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20 նիշանոց ծածկագիրը.

3) լիցենզիայում նշված գործունեության իրականացման վայրի նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը.

4) հայտարարություն արտադրանքի քիմիական և տեխնոլոգիական հսկման լաբորատորիայի առկայության մասին:

8. Լիցենզիա ստանալու համար օրենքով և սույն կարգով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը, հայտատուի հայեցողությամբ, կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային համակարգի միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 1283-Ն որոշմամբ սահմանված կարգով:

IV. ԹՈՐԱԾ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԽՄՈՐՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ ԷԹԻԼԱՅԻՆ ՍՊԻՐՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

9. Լիազոր մարմինը լիցենզիա տալու, լիցենզիա ստանալու մասին հայտը մերժելու, լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու վերաբերյալ եզրակացություն տալու նպատակով ստեղծում է լիցենզավորող հանձնաժողով (այսուհետ՝ լիցեն-

զավորող հանձնաժողով), որի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատում է լիցենզավորող մարմինը:

10. Լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է, եթե՝

1) դրանում առկա են կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ, կամ ներկայացված փաստաթղթերի թերի լինելու վերաբերյալ՝ օրենքով սահմանված կարգով նախազգուշացումն ստանալուց հետո հայտատուն օրենքով նախատեսված 10-օրյա ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չի ներկայացրել.

2) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի, այլ իրավական ակտերի և սույն կարգի 10-րդ կետի պահանջներին.

3) իրավաբանական անձն օրենքի կամ իր կանոնադրության համաձայն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեությամբ, դիմող ֆիզիկական անձն իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով.

4) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

11. Սույն կարգով սահմանված լիցենզիա ստանալու մասին հայտը մերժվում է՝ լիցենզավորող մարմնի որոշմամբ:

12. Լիցենզավորող մարմնի որոշումները կարող են բողոքարկվել՝ օրենքով սահմանված կարգով:

V. ԹՈՐԱԾ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԽՄՈՐՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՑ ԷԹԻԼԱՅԻՆ ՍՊԻՐՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ, ԿԱՍԵՑՄԱՆ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

13. Լիցենզիան վերաձևակերպվում, լիցենզիայի գործողությունը կասեցվում կամ դադարեցվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

14. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի իրականացման լիցենզիա ստացած անձը պարտավոր է պահպանել բնապահպանական, հիգիենիկ և սանիտարա-համաճարակային, հակահրդեհային նորմերը և կանոնները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
օգոստոսի 2-ի N 968 - Ն որոշման

Ձև

Հ Ա Յ Տ

ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայտատու

_____

(իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)

2. Գտնվելու վայրը

_____

_____

3. Գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը _____

_____

4. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որին հավակնում է իրավաբանական անձը

_____

_____

5. Պետական գրանցման կամ հաշվառման համարը _____

Հայտին կից ներկայացվող փաստաթղթերն են՝

1) պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը,

2) լիցենզիայում նշված գործունեության իրականացման վայրի նկատմամբ իրավունքը հավաստող փաստաթղթի պատճենը,

3) հայտարարություն արտադրանքի քիմիական և տեխնոլոգիական հսկման լաբորատորիայի առկայության մասին:

Ներկայացված տեղեկությունների իսկությունը հաստատում եմ:

ՀԱՅՏԱՏՈՒ _____ _____ _____

(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

12_0968

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2012 թվականի
օգոստոսի 2-ի N 968 - Ն որոշման

Ձև

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻՑԵՆԶԻԱ Ա-XX-000000

Տրված է _____ _____ 20 թ.

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը _____

_____

_____

Լիցենզավորված անձը _____

(իրավաբանական անձի լրիվ անվանումը) (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)

_____

(իրավաբանական անձի գտնվելու վայրը) (ֆիզիկական անձի բնակության վայրը)

Գործունեության իրականացման վայրը _____

(հասցեն)

Գործողության ժամկետը՝ անժամկետ:

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

12_0968